

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուլլ, կէս տարվանը 6 բուլլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՊՈԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արարատ սարի վրա
բարձրանալը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Նամակ Շվեյցարիա-
յից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ԲՈՐՍՍԱ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տա-
ւադարձութեան խնդիրը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԻ ՎՐԱ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Սեպտեմբերի 12-ին Թիֆլիսի Աշխարհադրական
Ընկերութեան նիստում (Շտաբի դահլիճում), և-
րիտասարդ ուսանող պ. Մարկոսի կարգաց իր
գիւղերումը Արարատ սարի վրա բարձրանալու
մասին Պ. Մարկոսի և իր ընկերները՝ ուսուցիչ
Պօպով, տեղական պահապան զօրքի մէջ ծառա-
յող Մանուկով և հինգ քիւրդերը, սկսեցին բարձ-
րանալ Արարատի ստորոտի հարաւ-արևմտեան
կողմից օգոստոսի 12-ին, առաւօտեան 9 ժամին:
Սկզբից ճանապարհը դժուար էր, այնուհետև ար-
շաւանը պէտք է անցնէր ժայռերի վրա, ապա
սկսվեց անտանելի ճանապարհ՝ փխրուն հողով
ծածկված դառնվայրով: Այդտեղ բարձրացողնե-
րը երկու քայլ դէպի առաջ էին անում և մի
քայլ դէպի յետ: Վերջապէս երեկոյեան ժամը
5-ին արշաւանը հասաւ մի տախարակ բարձրա-
ւանդակին, որը բարձրացնէր նայելով դտնվում է
13 հազար և մի քանի հարիւր ոտնաչափ բարձ-
րութեան վրա ծովի մակերևութից: Յոգնած լի-
նելով անտանելի ճանապարհից, որի ընթացքում
պարտնեցող կրէն էին մեծ դժուարութիւններ ու
արգելքներ, մանաւանդ սաստիկ տանջվելով փրկու-
րուն հողի վրայով բարձրանալու ժամանակ, նը-

րանը դիշերեցին այդ բարձրաւանդակի վրա:
Այդտեղից միւս օրվայ, այսինքն օգոստոսի 13-ին
առաւօտեան ժամը 5-ին արշաւանը շարունակեց
բարձրանալ դէպի Արարատի գագաթը, որին և
հասաւ նոյն օրը, ժամը 2-ին կէսօրից յետոյ: Ար-
շաւանքի անդամները ունեւ հետզհետէ բարձ-
րանալու ժամանակ դժուար էին թէ իրանց գլուխը
չշարժէր, մի քանիների սիրտն էր խառնում:
Գագաթի ամենաբարձր կէտի վրա պարտնեցող
մնացին ընդամենը 32 րօպէ: Գագաթը ներկայաց-
նում է մի անաղին տափարակ, որի հիւսիս-արե-
ւելեան կողմը, որը նայում է դէպի Արաքսի ձո-
րը ժայռոտ է, իսկ հակառակ, այսինքն՝ հարաւ-
արևմտեան կողմի մակերևութը ամբողջութեամբ
ծածկված է սառուցով և ձիւնով: Երբեք կողմի
վրա ձիւնը խոր էր և ձիւնի միջից տեղտեղ քա-
րեր էին ցցված ու ձիւնի վրա ընկած, այնպէս
որ հեշտ էր նրանց հաւաքել: Քիւրդերը սկսեցին
հաւաքել այդ քարերը ու շտապով ձիւնեցին այդ
քարերից մարդու հասակի բարձրութեամբ մի
բուրգ, որին պ. Մարկոսի պնդացրեց իր ջերմաչա-
փը, որը և թողեց Արարատի բարձրութեան վրա:
Այդ բուրգը հեռադիտակի միջոցով, պարզ եղա-
նակին, երևում է այժմ Երևանից: Գագաթը հա-
ւած րօպէին ջերմաչափը ցոյց էր տալիս 0 աս-
տիճան, սակայն մի քանի րօպէից յետոյ, սառն
քամի բարձրացաւ, սկսվեց բուրգը և ջերմաչափը
անմիջապէս ընկաւ—2 աստիճանի: Մարկոսի իր
ընկերներով ուղևոր էր աւելի երկար մնալ գագա-
թի վրա, բայց քիւրդերը ասեցին թէ վտանգաւոր
է և շտապեցնում էին ճանապարհորդներին չու-
տով իջնել, քանի որ բուրգը սկսվում էր սպառ-
նալ դառնալ: Եթէ եղանակը բոլորովին պարզ
լինէր, Արարատի գագաթից պէտք է երևար կով-
կասեան սարերի ամբողջ շղթան, պէտք է երևա-
լին մինչև անդամ Սև և Կասպից ծովերը: Բայց

օգոստոսի 13-ին, ամպամած օր լինելով, արշա-
ւանը զրկվեց այդ տեսարանից: Մարկոսի հաշւեց
բարձրութիւնը օգոստոսի 13-ին Արարատի բարձրութիւ-
նը: Այդ բարձրութիւնը նրա հաշուով հաւասար է
16,916 ոտնաչափի ծովի մակերևութից, այն ինչ
մինչև այժմ հաշուում էին թէ այդ սարի բարձրու-
թիւնը հաւասար է 16,960 ոտնաչափի: Ուրեմն
զանազանութիւնը 44 ոտնաչափ է: Այդ հաշիւ-
ները քնն է ուղղվել, այդ ցոյց կը տայ ապա-
զան:

Ինչպէս անցնէր, Արարատի գագաթի վրա մնա-
լով ընդամենը 32 րօպէ, արշաւանքի անդամները
սկսեցին իջնել սարից նոյն ճանապարհով, որով
բարձրացել էին: Զառիվայրը շատ արագ լինելով,
պարտնեցող անդամները կերպով երկու ժամվայ
ընթացքում իջան մինչև նախընթաց օրվայ ի-
րանց դիշերից: Երբեք, այն ինչ նոյն տեղից մին-
չև գագաթը բարձրանալու համար նրանք գործ
էին դրել 9 ժամ:

Մենք կարճ կերպով յիշեցնէք պ. Մարկոսի դե-
կուցման զիջումը կէտերը: Նրա մանրամասն դե-
կուցումը կը տպագրվի Աշխարհադրական ընկե-
րութեան հրատարակութեան մէջ:

Արարատ սարը իր բարձրութեամբ միջին տեղն
է բունով կաղնէկի և էլբրուսի մէջ: Կաղնէկը
16,500 ոտնաչափ բարձրութեան է հասնում, Ա-
րարատը 16,960 (Մարկոսի հաշուով 16,916) ոտ-
նաչափ, իսկ էլբրուսը, որի գագաթի վրա այս
օրերս բարձրացել է գերմանացի բարձր Ունդեր-
Շտէյնբերգը, հասնում է 18,000 ոտնաչափ բարձ-
րութեան:

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐԵՐ

Այսօր, հինգշաբթի օր, ամսին 15-ին, Թիֆլիս
պէտք է ժամանի Մակար Կաթողիկոսը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Gegen Dummheit kämpfen
Götter selbst vergebens.

Յիմարութեան դէմ աստու-
ածներն անզամ զորք են
մարտնչում:

Որտեղից է հնարել ուսումնական պ. Հիւր-
ման, որ ամեն ազգութեան փոքրամասնութիւնը,
լեզուի արտասանութեան վերաբերմամբ անպատ-
ճառ պէտք է ենթարկվի մեծամասնութեան ար-
տասանութեան: Միթէ նրան յայտնի չէ պատ-
մութիւնից որ այդ անպատճառ չէ պատահում,
այլ լեզուները գոյութեան համար իրանց մաքառ-
ման մէջ կարող են հակառակ ընթացքին էլ հե-
տեկ: Պատահում է, ի հարկէ, որ լեզուի կաղ-
մակերպութեան և լեզուի բառերի արտասանու-
թեան մէջ ազգի փոքրամասնութիւնը ենթարկ-
վում է, կամ հետեւում է մեծամասնութեան, բայց
դա անհրաժեշտ պայման չէ: Պատահել է և հա-
կառակը, այն է որ ազգի մեծամասնութիւնը իր
զրահան լեզուի կաղմակերպութեան և տառերի
արտասանութեան մէջ հետեւել է ազգի փոքրա-
մասնութեան խօսած լեզուին և արտասանու-
թեան: Այդպէս ռուսաց այժմեան լեզուն կաղմ-
վել է ազգի փոքրամասնութեան, Մոսկովայի իշ-
խանութեան (Московское княжество) մէջ խօսած
լեզուի ազդեցութեան տակ և հետեւել է նրա ար-
տասանութեան: Խառակաւ նոր գրական լեզուն
փոքրամասնութեան, փոքրիկ Սեյմիայի մէջ խօ-
սած բարբառի ազդեցութեան տակ է կաղմա-
կերպվել և այնու Բայց եթէ ուղիղ էլ լինէր, որ
ազգերի գրական լեզուները կաղմակերպվում են
ձայն երբ մեծամասնութեան, որ մե-

ծամասնութեան լեզուն ու մեծամասնութեան
արտասանութիւնը պէտք է անպատճառ տիրա-
պետող դառնայ ամբողջ ազգի մէջ,—Հիւրմանի
յօդուածում բերած փաստը իբր թէ միայն թիֆ-
լիսեցի, կամ ռուսաստանցի հայերը արտասա-
նում են հայերէն տառերը ճիշդ այնպէս, ինչպէս
մեր նախնիներն են արտասանել, կամ ինչպէս
նոյն տառերը արտասանում էին հռոմէացիք ու
յոնիքը և ինչպէս մինչև այժմ արտասանում են
բոլոր եւրօպական ազգերը,—հիմնովին սխալ է:
Ընդհակառակն, մենք հայերէն բ. գ. դ. ու կ. ի.
ճիշդ այնպէս ենք արտասանում, ինչպէս արտա-
սանում է հայերի մեծ մասնութիւնը, ինչ-
պէս այդ տառերը արտասանում են և կովկասի,
Անդրկովկասի ու Երևանեան նահանգի հայերը,
ինչպէս Պարսկաստանի ու Հնդկաստանի հայերը,
ինչպէս և ամբողջ թիւրքաց Հայաստանի և փոքր-
Ասիայի հայերը, վերջապէս ինչպէս արտասա-
նում են այն բոլոր հայերը, որոնք կամ իրանց
բուն պատմական հողի վրա են մնացել, կամ ու-
րոնք գտն է ընդհանրապէս Ասիայից չեն դուրս ե-
կել: Իսկ մեր արտասանութեան հակառակ՝ ար-
տասանում են միմիայն կ. Պօլսի և Բուլղարիայի
հայերը, այն աննշան խումբ հայերը, որոնք գաղ-
թիւով Ասիայից, հեռու իրանց հայրենիքից, կոր-
ցրել են նախնիների արտասանութեան յիշողու-
թիւնը և հայոց տառերի արտասանութեան մէջ
ենթարկվել են ոչ թէ ժամանակակից, հայոց լե-
զուին ազգակից եւրօպական լեզուներին, այլ մեզ
համար օտար թիւրքաց լեզուի արտասանու-
թեան ազդեցութեան: Ուրեմն որ կողմն է Հիւր-
մանի բերանով հօգնված մեծամասնութիւնը
Հնդկաստանի հայերի անաղին մեծամասնութիւ-
նը «թիֆլիսցիներին» պէս են արտասանում, իսկ
շատ չնչին փոքրամասնութիւնը, այն էլ Ասիա-
յից դուրս ապրող կ. Պօլսի և Բուլղարիայի, թեւով
աննշան հայերը, որիւր կերպ են արտասանում:
Համոզվելու համար որ և թիւրքաց Հայաստանի
հայերը հայոց բոլոր տառերը ճիշդ մեզ պէս են
հնչում և միայն այն ժամանակ սկսում են աղա-

ւաղել իրանց արտասանութիւնը, երբ կ. Պօլսի
են գալիս և մանաւանդ մտնում են կ. Պօլսի հո-
տմանի զարդանքը,—հարկաւոր է միայն ան-
ձամբ խօսել թիւրքաց Հայաստանի հայերի հետ:
Կանչեմք մի մեկեւն կամ մի վանեցուն, Հայաս-
տանի այն մասերի բնակչին, որտեղ հայերը ա-
մենախիտ ազգաբնակչութիւն են կազմում, գրեթէ
անխառն են ըմպելով թիւրքերից, խօսացնէք
այդ մեկեւն և վանեցուն,—և կը լսենք նրանց
բերանից հետեւեալ արտասանութիւնը. Կարա-
պետ (Karapet), և ոչ թէ պօլսեցիներ Նման
Կարաբեղ (Garabed), կը համոզվենք որ նրանք
ասում են վանք (wank) և ոչ թէ վանգ (wang),
արտասանում են՝ ես գնացի (ies gnazi), և ոչ
թէ ես կնացի (ies knazi), և այլն....

Ուրեմն որ կողմն է մնացել Հիւրմանի յայտա-
բարած մեծամասնութիւնը: Մենք կրկնում ենք.
Հիւրման ինքն չէր կարող այդ մասին որ և է
փոքր ի շատէ ճիշդ տեղեկութիւն ունենալ, իսկ
Վիէնայի Միջիմարտեան սուրբ հայրերը դիտմամբ
խաբեցին նրան, իրանց դատը չանկու համար
սխալ կերպով ներկայացնելով իրողութիւնը: Եթէ
ոչ, պէտք է ընդունենք որ հայոց այժմեան ժողո-
ւրդի խօսած լեզուի մասին Վիէնայի հայ-կաթո-
լիկ արեղաններն էլ կատարելապէս տգէտ են....

Պ. Հիւրմանի յօդուածի երկրորդ էակն թէ-
զիսն այն է, որ ամեն լեզու ունի հն ա ձ և և
ն ո ռ ա ձ և արտասանութիւն: Գա արդէն ցոյց է
տալիս իրան գերմանացի ռուսոմանական անձնա-
կան տգիտութիւնը: Այդ տեսակ անմիտ թէզիս
արժանի է այն անունը կրելու, որը գերմանացի
ուսանողները շատ անգամ իրանց բուրժ և լիւն-
քին դոռ տուող՝ պրօֆէսորները մի քանիների
անմիտ ասածներն են յատկացնում՝ ein wissen-
schaftlicher Blödsinn.

Վիէն տեղեկացիք հին արտասանութիւնը պա-
հած են, այս իրենց ո չ ի ն չ գոլութիւն է, վար-
դապետական ձևով քարոզում է մեզ երևելի Հիւր-
ման: Ինչ կասէր նոյն Հիւրման, եթէ մենք էլ

Յիշեցնում ենք Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու
ծխականներին, որ առաջիկայ կիրակի, սեպտեմ-
բերի 18-ին, լինելու է այդ եկեղեցու երեցի ո-
խի ընտրութիւնը: Ընտրութիւնը նշանակված է
պատարագից յետոյ, առաւօտեան 11 ժամին:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Ինչպէս
յայտնի է Թիֆլիսի Խարիտիկ ամսած թաղում
կայ արդէն մի քաղաքային արական դպրոց:
Գալոցը տարական է և այդտեղ բոլոր առար-
կաները հայերէն լեզուով են մատակարարվում:
Այժմ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերու-
թիւնն էլ հիմնել է նոյն թաղում մի տղայոց
դպրոց: Խարիտիկ թաղի ընակիչները ունենալով
արդէն մի քաղաքային հայոց արական դպրոց,
շատ ուրախ կը լինեն, եթէ մեր Բարեգործական
ընկերութիւնը, փոխանակ երկրորդ տղայոց դպ-
րոց հիմնելու, հիմնէր նոյն թաղում մի իգական
դպրոց, քանի որ ամբողջ թաղում օրիորդաց ոչ
մի դպրոց չը կայ: Արդէն հիմնված արական
դպրոցի կարգ ու սարքը կարող էր շատ լաւ
պէտք գալ և օրիորդաց դպրոցին, իսկ յիշեալ ա-
րական դպրոցը յաճախող եօթ թէ ութ հոգի ա-
շակերտները կանցնէին քաղաքային դպրոցը:
Գուցէ շատերն յայտնի չէ, որ Թիֆլիսի այլ և
այլ թաղերում կան արդէն 7 հատ տարրական
քաղաքային ամսած դպրոցներ, որոնց հիմնել է քա-
ղաքային վարչութիւնը, և որոնցից երկուսն էլ
բոլոր առարկաները ռուսերէն լեզուով են դաս
տրվում, երկուսն էլ վրացերէն լեզուով և երե-
քի մէջ հայերէն լեզուով:

Կովկասի դանազան քաղաքներից արդէն սկսել
են գալ Թիֆլիս պատգամաւորութիւններ՝ տեղա-
կան հիմնարկութիւնների և ազնականութեան
կողմից:

Գերմանացիները մասին մի այդպիսի Blödsinn ա-
սեցին. «Եթէ գերմանացիք իրենց հին արտասա-
նութիւնը պահած են, այս իրենց ո չ ի ն չ գո-
լութիւն է: Եւ ճշմարիտ, քանի դարեր են ան-
ցել և գերմանացիք, Փրանսիացիք, իտալացիք
և այլ եւրօպական ազգերը շարունակում են
պահպանել իրանց լեզուի ու տառերի հին ար-
տասանութիւնը, ճիշդ հռոմէական և յունական
լեզուների տառերի արտասանութեան նման, և
չեն փոխում, չեն ուղղում առաջադիմել ու ն ո-
ր ա ձ և արտասանութիւն ընդունել: Ինչպէս դա-
րերից ի վեր, այնպէս էլ այժմ, գերմանացիք յա-
մառում են առել genitivus, dativus, և այն աս-
տիճան յետադէմ են, որ չեն ուղղում պօլսեցի հա-
յերի նորաձև արտասանութիւնը ընդունել ու ա-
սել kenidivus և tadivus.... Պ. Հիւրման, որքան
ձեր ազգը յետ է մնացել հայերից. ձեր ազգը, ո-
րը աւելի բարձր կուլտուրական ազգ է համար-
վում, քան թէ հայերը, այդ վերջինների չափ էլ
առաջադիմութիւն չէ արել և միշտ յամառել է
իր հին արտասանութեան մէջ, որը ձեզ, գերմա-
նացիների համար ո չ ի ն չ գոլութիւն է.... Մին-
չև հիմա դուք Բերլին Berlin էք արտասանում,
Բիսմարկ Bismark էք արտասանում.... Վերջա-
պէս Երբ այնքան կը զարգանա, այնքան կառա-
ջադիմէք որ այլ և Berlin չէք ասի, այլ նորաձև
արտասանութեամբ Perlin կասէք, Երբ կը լինի
որ ձեր Բիսմարկ Pismarg կը կոչվի.... Չէ, խոս-
տովանվեցէք պ. Հիւրման, որ ձեր ազգը քաղա-
քայինութեան ճանապարհի վրա դեռ շատ և
շատ հեռու է մնացել հայերից....

Եւ ճշմարիտ, այդ ինչպէս է եղել, որ հայերը
կարողացել են այդ տեսակ անաղին լեզուադի-
տական առաջադիմութիւն անել, ընդունելով ն ո-
ր ա ձ և արտասանութիւնը, իսկ եւրօպական ազ-
գերը, որոնք մեղանից շատ բարձր են քաղաքա-
կրթութեամբ, այդքան դարեր ապրելով, այդքան
ժամանակ իրանք դարգանալով և զարգացնելով
իրանց լեզուն,—մինչև հիմա հայերի չափ չեն ա-
ռաջադիմել և դարերից ի վեր ընդունված հնաձև

Ինչպէս լսել է «ԿԱՅԻՆ» լրագիրը, վրաց ներկայացուցիչները սկսելու են սեպտեմբերի 22-ից, և առաջին անգամ պէտք է խաղացվի Յագարելու «Յիմբրելի» պիեսան:

Թէ Թիֆլիսի և թէ գաւառական հայոց դպրոցները մէջ վերջին տարիները մի վերին աստիճանի վատ սովորութիւն է մտել, այդ այն է, որ դպրոցները վարչութիւնները աշխատում են որ-քան կարելի է թուով շատ վարժապետներ և վարժուհիներ ունենալ: Մանկավարժական հասարակ ճշմարտութիւն է, այն իրողութիւնը, որ քանի մօտիկ կը լինի վարժապետը դպրոցին, քանի պիտի կը լինի կապված վարժուհին դպրոցի հետ, այնքան էլ մեծ օգուտ և լաւ առաջադիմութիւն կունենայ ուսումնարանը: Վարժապետին դպրոցի հետ պիտի կապուի ամենալաւ միջոցներէն մէկն էլ այն է, որ նա ունենայ շատ զբաղմունք, շատ դասեր միայն մի դպրոցի մէջ, և ստիպված չը լինի իր ապրուստը հայթաթելու համար մի քանի դպրոց գնալու, կամ կողմնակի գործեր տանձնելու: Բայց մի դպրոցական վարչութիւնները միանգամայն դժուար հակառակն են վարժուհի մի վարժապետին կամ մի վարժուհուն դպրոցի մէջ տալիս են շաբաթական 6, կամ թէ 10 դաս, այնպէս որ նոյն վարժապետը ստիպված է լինում ուրիշ տեղերում էլ գործ վնասելու, և այդպիսով դպրոցի վրա չէ կարողանում նայել իբրև մի այնպիսի հիմնարկութեան վրա, որին պէտք է նուիրել իր բոլոր ոյժերը, այլ նայում է իբրև մի այնպիսի հիմնարկութեան վրա, որտեղ մի քանի ժամ պարապմունք ունի, և ուրիշ ոչինչ: Դասերից դուրս այդպիսի վարժապետը դպրոցի համար, ի հարկէ, ոչինչ չէ կարող անել, և զարմանալի չէ, որ թուով շատ վարժապետներ և վարժուհիներ ունեցող մեր դպրոցները չեն ունենում իրանց համար մշտապէս և անբաժան կերպով աշխատողներ: Դիցուք դպրոցն ունի հինգ բաժանմունք:—վարժապետների և վարժուհիների թիւը հասնում է տասնի, կամ նոյն իսկ աւելի, որոնցից ամեն մէկը շատ անգամ օրական երկու դաս անգամ չէ պարապում դպրոցում: Ոչ մի վարժապետի համար դժուար չի լինի օրական չորս դաս տալը, և մեր դպրոցների վարչութիւնները շատ սխալվում են կարծելով թէ որքան վարժապետ կամ վարժուհի քիչ դաս կը տան, այնքան էլ նրանք լաւ կը պարապեն:

արտասանութիւնը յամառութեամբ միշտ անխախտ և միակերպ պահպանել են: Այդ ինչպէս է եղել որ Ֆրանսիացիք մինչև այժմ, այդքան դարերի ընթացքում, միշտ Paris են ասում իրանց մայրաքաղաքին և նրանց խնրը չէ կրտսում վերջապէս Baris ասել: Ինչպէս չեն մտածում Gambetta-ի ու Grevy-ի տեղ ն ո ր ա ձ և արտասանութեամբ՝ Kampedita ու Kreyv ասել: Ինչպէս է պատահել որ այդքան դարեր անցել են և իտալացիք մինչև հիմա էլ պահպանել են հին հռոմայեցիների արտասանութիւնը, մինչև հիմա էլ հին Հռոմի արտասանութեամբ՝ ց ինչպէս ց և ոչ թէ ինչպէս ք են արտասանում, և ինչպէս ք և ոչ թէ ինչպէս ք են գրում և այլն....

Այն, պ. Հիւբշման, դուք, եւրոպացիք մեզանից շատ յետ էք մնացել, բայց մի յուսահատվէք, կը գայ ժամանակ, երբ ձեր Բիւրնարկ կանտանիլի Pismarg, ձեր Բիւրնարկ մայրաքաղաքը նորաձև արտասանութեամբ կանտանիլի Perlin, իսկ ձեր սեփական ազգանունը, պ. Հիւբշման, նոյնպէս փոփոխվելով ձեր ժառանգների կանտանիլին ոչ թէ ձեզ պէս Hubschmann, այլ անուշտ Hupschmann, ինչպէս և գրում են արդէն ձեր ազգանունը ձեզ հետ ուսումնական հարցերում համարաչափ Միլիթարեան ուսումնական հայերը....

Մեզ մնում է միայն յիշել այստեղ պ. Հիւբշմանի յօդուածի երրորդ նշանաւոր կէտը, այն է որ՝ գուցէ կը գայ ժամանակ, երբ հայերի մէջ կը ծագի գրական լեզու հնարեւելո խնդիրը, և այն ժամանակ գիտնականները իրար հետ յարաբերութեան մէջ մտնելով, կը մշակեն այդ տեսակ լեզու ու կը մտցնեն նրան ժողովրդի մէջ: Այդտեղ արդէն կատարեալ հակասութիւն ենք նկատում Հիւբշմանի յօդուածում: Նոյն յօդուածի վերջում գերմանացի ուսումնականն ասում է՝ «Լեզուաց փոփոխութիւնը խօսողի կամքէն բխում է անկախ է առանց գիտակցութեան յըն-

Ստավրոպոլի նահանգի Մեղվեթինի դաւառի, Նովո-Վոլոտրիկսկի գիւղի բնակիչները նորեւս ընդ-դիմադրութիւն են ցոյց տուել տեղական իշխանութեանը, չը կամենալով թող տալ որ անասնաբույժը քննեն հիւանդացած անասունների հիւանդութիւնը: Այդ առիթով տեղական նահանգապետը դիմել է այդ գիւղացիներին մի պաշտօնական գրութեամբ, որի մէջ բացատրելով գոյութիւն ունեցող օրէնքները գործադրութեան նշանակութիւնը, հրաւիրում է գիւղացիներին ենթարկվել օրէնքի պահանջներին, սպառնալով հակառակ դէպքում խտուղիւծման պատժել: Բայց չը նայած այդ սպառնալի պաշտօնական գրութեանը, որը հրատարակված է սեպտեմբերի 1-ին, գիւղացիները շարունակեցին իրանց ընդդիմադրութիւնը, այնպէս որ սեպտեմբերի 4-ին 400 կողակներ մտան Նովո-Վոլոտրիկսկի գիւղը, և ինչպէս հաստատ աղբիւրներից հաղորդում է «Сѣверный Вѣстникъ» լրագիրը, ձերբակալեցին շատերին: Ձերբակալութիւնների ժամանակ գիւղացիները նորից ընդդիմադրութիւն ցոյց տուցին, մի քանի հոգի վիրաւորվեցան. ձերբակալված են 139 գիւղացիներ: Գործի վախճանը առ այժմ յայտնի չէ:

ԿԱՐՍԻ մեր թղթակիցը գրում է մեզ սեպտեմբերի 11-ից հետեւեալը: «Այսօր առաւօտեան 3 ժամին և 40 րոպէին դգալի եղաւ այստեղ երկրաշարժի բաւական զօրեղ հարուած, որը տեւեց մօտաւորապէս 40 վայրկեան: Այս րոպէին լսեցինք որ երկրաշարժից փլել են և մի քանի տըներ: Մանրամասնութիւնները հետեւեալ անգամ»:

ԲԱՌՈՒՄԻՑ, ամսիս 11-ից մեզ գրում են. «Երեկ գիշեր, ժամը 4 և 43 րոպէ, բաւական սաստիկ երկրաշարժ եղաւ, որի նմանը շատերը Բաթումում դեռ չեն յիշում: Զնած մարդիկ բոլորը արթնացել էին: Այսօր ժամը 4—40 րոպէին կէսօրից յետոյ, նոյնպէս երկրաշարժ եղաւ, բայց ոչ այնպէս սաստիկ»:

Սեպտեմբերի 12-ին, կէսօրից յետոյ, Բոտանի-ական այդու մօտ անօրհասկալ ինքնապայտու-թիւն գործեց Գուլիպիսի նախկին հայտարար դատաւոր Տրէմիլիսկի: Նրա թողած նամակից երևում է, որ անձնապայտութեան պատճառը անարդար կերպով պաշտօնից զրկվելն է: Տրէմիլիսկի անցեալ տարի անսպասելի կերպով հեռացվել էր իր պաշտօնից՝ զոհ գնալով, ինչպէս ինքն

թացս դարուց, սերնդէ սերունդ անցնելով կը կատարէին Բայց մէջ միտ այսպիսի փոփոխութիւն յառաջ գայ, այնուհետև մարդկային կամք մը կարող չէ զայն բաժնալ, ինչպէս որ մարդկային կամք մը զայն յառաջ չէ բերած: Ուրեմն այդտեղ ուսումնականը պնդում է որ այս կամ այն կերպ լեզու առաջացնելն ու փոխելը մարդկային կամքից դուրս է. այդ տեսակ լեզուաբանական յեղափոխութիւնները պէտք է կատարվեն բնական օրէնքի գործութեամբ... Իսկ նոյն յօդուածի ներքեւում, նոյն ուսումնականը մեղ հաւատաց-ված է թէ կարելի է գրական լեզու հնարել, թէ կարելի է որ գիտնականները իրար մէջ հաւաքվեն, ու մշակեն մի նոր լեզու, և ապա մշտ-ցնեն իրանց այդ նորահնար լեզուն ժողովրդի մէջ....

Եւ բացի սրանից ինչ անհերքելի տղիտու-թիւն մի ուսումնական լեզուագետի կողմից, որը հայոց լեզուն իր համար մասնագիտութիւն է չի-նել.... Նա մինչև անգամ չը գիտէ որ հարկ էլ չը կայ հնարել մի նոր հայոց գրական լեզու, քանի որ այդ լեզուն կայ, արդէն գոյութիւն ունի, քանի որ այդ լեզուով ամեն առարկաներն են մատակարարվում մեր հոգեւոր միջնակարգ դպրոցներում, այդ լեզուով լրագիրներ են հրատարակվում, ամբողջ գրքեր են գրվում.... Այդ լեզուով կարելի է արդէն թարգմանել եւրոպա-կան ուսումնական գրութեանը, կարելի է բնով վրա ներկայացնել ամեն տեսակ պիեսներ թեթիւ և լուրջ լինելից սկսած մինչև Գեկսպիի ան-մահ գրութեանը.... Եւ անա Հիւբշման նոր է մտածում մեղ համար մի նոր գրական լեզու հը-նարելու մասին, այն էլ գ ու ը չ է ապագայում....

Գիտենք որ այդ յօդուածը կարդալով կը զը-տնվեն մեզ մօտ ապուշներ, որոնք իրանք շատ սիրելով ամեն տեսակ կապվածաւոր հեղինակու-թիւնների երկրպագու իրանց ձևացնելը, կը մե-ղադրեն մեզ, որ մենք յարձակվում ենք առհասա-րակ գ ե Ր մ ա ն ա կ ա ն ու ս մ ա ն դէմ....

է գրում, ուրիշներ ինտրիգաներին և զեղծումնե-րին, այդ բանը շատ ծանր կերպով ազդեց նրա վրա, և նա վճռեց ինքնասպանութիւն գործել, թողնելով անօգնական իր կնոջը և որդիներանց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅԻՑ

Կ. Պօլիս, 6 սեպտեմբերի

Մինչև այս պահու, երեկոյ է արդէն, և տա-կաւին հրաւեր չը ստացվեցաւ Ազգ. Ժողովոյ յա-ռաջիկայ ուրբաթ առաւոյն համար. տակա-ւին յայտնի չէ թէ՝ տպագրական յապաղում կայ թէ տեղապահի և Գաղ. Ժողովոյ նոր մէջ վար-դապետութիւնը:

Սեպտեմբեր 3-ի թղթակցութեամբ հաղորդե-ցի արդէն թէ Գաղ. Ժողովոյ պաշտօնական մէջ ազդը ինչ տարօրինակ երեցաւ և թէ Ստեփան փաշայի խնդրել ինչ ծանր հետևութիւններ կը-նայ ունենալ: Շաբաթ օրէն վերջն յուզումն աղ-գին մէջն ալ տարածեցաւ և մանաւանդ Ազգ. Ժողովոյ անդամոց մէջ: Տեղապահ Սիմօն եպիս-կոպոսի և առեւտրական Սիմօն պէյի ձեռք պար-զապէս խաղալի պիտի լինի Ազգ. Ժողովը, զայս կըսէին շատ երեսփոխանք: Ազգ. Ժողովոյ մայր-դիւանը կիրակի օր գումարեցաւ և խորհեցաւ թէ ինչպէս կարելի է դարմանել Գաղ. Ժողովոյ այս անդէպ միջամտութիւնը Ազգ. Ժողովոյ գործոց մէջ: Կարծիքներն երկուքն բաժնուած էին. դիւա-նի անդամոց մէջ մասը կըսէր թէ անմիջապէս յայտարարութիւն հրատարակելով պահարակիւր է Գաղ. Ժողովը և յայտարարելու ազդին թէ՝ Ազգային Ժողովն է իր գործոց տէրը, թէ իր ու-րուշումն է այս ուրբաթ կատարել Պատրիարքի ընտրութիւնը, ոչ ոք կարող է յետաձգել այս ընտրութիւնը: Միւս մասը համոզուած ըլլալով հանդերձ թէ այս է ճշմարտութիւնը, կը կարծէր որ խոհեմութեամբ շարժելու է: Ամեն տեղ նե-րելի է բաղմամբ անդամ ունեցող ժողովներու ըլլալ կրակոտ, անզգուշ, կրքերու ենթակա, վեր-ջապէս կարելի չէ պահանջել հարկաւոր անձե-րէ կատարել խոհականութեամբ գործել. իսկ վարչութիւնները, բաղկացեալ հինգ-սասը ան-դամներէ, պարտաւոր են խոհական ըլլալ, ժո-ղովները չափաւորել, կրքի ներքեւ չը շարժի-մեր մէջ հակառակն սկսած է ըլլալ, վարչու-

Բայց մենք ինքներս գերմանական ուսանող ե-ղած ժամանակ և Գերմանիայում երկար ապրած լինելով, շատ աւելի ենք յարգում Գերմանիան և նրա գիտութիւնը, քան թէ գերմանական ուսման իրանց երկրպագու կեղծ ձևացողներն ու նե-րկայացողները: Մենք յարձակվելով ուսումնական անուանվածները սրա կամ նրա դէմ, ամենին չենք ընդհանրացնում հարցը և շատ լաւ գիտեմք որ ոչ թէ միայն այժմ, բայց և դարերից ի վեր գերմանական գիտութեան ներկայացուցիչներ թուում միշտ կային թէ երեկոյ է ա ն ն ծ ա Ր ն ե Ր և թէ նեղհայաց, անընդունակ, անշնորհ ա-պ ու շ ն ե Ր: Դարերից ի վեր գերմանական գի-տութեան ու համալսարանի մէջ՝ գերմանական գիտնական հանճարի կողքին (der deutsche wis-enschaftliche Genius) միշտ աշողում էր իր հա-մար բուն դիմ և գերմանական գիտնական բը-թ ա մ տ ու թ իւ ն ը (der deutsche wissenschaftli-che Blödsinn):

Այդ գերմանական գիտնական Blödsinn-ի դէմ չէր արդեօք որ դարերի ընթացքում անդադար պէտք է մաքառելին գերմանական հանճարի ա-մենայայտնի ներկայացուցիչները, այդ գերմանա-կան կեղծ ուսումնական, կամ աւելի լաւ է ա-նը՝ իր երեսին գիտնական դիմակը ծածկող Blödsinn-ի դէմ չէր արդեօք որ իրանց ամբողջ կեանքը մաքառեցին գերմանական մտքի ամենա-փայլուն ներկայացուցիչները: Գեթե, Շիլլեր, Լէսինգ, Հէյնէ, Բեթհովեն, Լասալ և այլն:

Եւ այդ նոյն ապուշ, կոյր, անմիտ ոյժը, այդ գերմանական Blödsinn-ը չէր արդեօք, որը միշտ ամենակատար լեզուով հալածում էր ու ջանում էր խեղդել գերմանական ճշմարիտ հանճարը:

Այն օրից, երբ մենք յարուցինք հայոց լեզուի տառադարձութեան խնդիրը, Վիլհելմայի և Վենե-ցիայի ուսումնական Միլիթարեանները կա-տարելապէս մոլորվեցան: Առաջինները պատե-պատ են ընկնում, Հիւբշմանի պէս ուսումնա-կաններին դիմում, նրանցից պատասխաններ ու-

թիւնն է, տեղապահն է, որ կրքի ներքեւ անխո-հեմ կերպով կը գործեն, ուրեմն Ազգ. Ժողովոյ կը մնայ խոհական ըլլալ, կրքը չունենալ և չը թողուլ որ ազդը չարաչար վնասուի իր ապիկար և կրքոտ վարչութիւնէն և տեղապահէն: Այս մը-տածութիւններով կը խօսէր մայր-դիւանի միւս մասն, որով համաձայնութիւն գոյացաւ մէջեր-նին տեսնելու Գաղ. Ժողովոյ հետ նախ քան և է որոշում տալ: Նոյն օրը նամակ գրուեցաւ Մազուտեան Սիմօն պէյի, որպէս զի յաջորդ օրը անաւտոմատ Գաղաթիոյ խորհրդարանը դանուի: Երկուշաբթի առաւօտ Սիմօն պէյ, իբր առեւտա-պետ Գաղ. Ժողովոյ և տօք, Թիբեաքեան, առե-նապետ Ազգ. Ժողովոյ, բանակցեցան միասին: Պ. Թիբեաքեան այս տխուր օրերու մէջ Ազգ. Ժողովոյ ամուր վահանն է, ուղղամտութեամբ, արիւթեամբ և խելքով ու խոհականութեամբ կը պաշտպանէ Ազգ. Ժողովը, դժբաղդութիւն միջ-բան, ընդդէմ հայ թշնամեաց: Տեղապահ Սիմօն եպիսկոպոս և Գաղ. Ժողովոյ անդամներէ ոմանք մեղապարտ դիտումներ ունեն Ազգ. Ժողովը խո-նարհեցնել, տարկացնել, խաղալի ընել, և մարան նոյն իսկ ասոնց դէմ է: Մեզ յայտնի չէ թէ մոտ թիւն մէջ ինչեր կը դարձնեն: Պ. Թիբեաքեան մի առ մի խորտակեց Գաղ. Ժողովոյ առարկու-թիւնները, բայց կը տեսնէր որ Գաղ. Ժողովն ալ հրաժարական տալու կը պատրաստուի, դար-ձեալ ցաւ: Գաղ. Ժողովն հրաժարական եթէ տայ, և որովհետև Պատրիարք ալ չունենք, կա-ռավարական միջամտութիւն մը կրնայ տեղի ու-նենալ, ինչ որ շատ անախորժ է մեզ, իսկ շատ հաճոյ անոնց, որ ժողովրդական Սահմանադրու-թեան հակառակորդներն են: Այս պարագայիս մէջ պ. Թիբեաքեան զոհողութիւն ընելու խոհա-կանութիւն ունեցաւ. յանձն առաւ, որ այս նըս-տին երեսփոխանական ընտրութեանց խնդրի յու-զուի,—այսինքն Ստեփան փաշայի խնդրի—բայց պատրիարքական ընտրութիւնն ալ կատարուի, միայն թէ Ժողովը եթէ ուղե կրնայ յետաձգել ընտրութիւնը ուրիշ առաւ: Այս հիման վրա գո-յացաւ համաձայնութիւն և յայտարարութիւն մը հրատարակուեցաւ: Տեղապահ տեղեկութիւն չու-նէր այս գործերէն. ուրեմն չենք գիտեր թէ ինչ պիտի ընէ. հաւանական է որ համաձայնի: Ամեն պարագայի մէջ այս ուրբաթ առաւոյն նիստը փո-թորակից ըլլալու նշաններ կը կրէ:

Պատրիարքական ընտրութեան խնդիրը վերս-տին կը յուղէ ժողովուրդը և ժողովականները:

Գում, և որպէս զի պատասխաններ իրանց կար-ծիքին սպաստաւոր լինեն, խաբարայութիւնների են դիմում, հաւատարման չիւրջմանին որ հայերի մէջ ա. բ. գ. դ. ճիշդ եւրոպական ձևով արտասանողները միայն Թիֆլիսի հայերն են, այն ինչ միւս մի քանի միլիոն հայերը բոլորն էլ ա. պ. կ. տ. են արտասանում:

Երկրորդները, այսինքն Վենեցիայի Միլիթա-րեանների՝ Լեզու է փ ո Ր ն է Ը Ն Կ Լ Է. խեղճերը այլ ևս ոչինչ չեն ասում, լուռ են. խեղճերը իրանց դ ա Փ թ ա Ր ն ե Ր ը կողքեր են: Այնքան են մոլորվել որ այժմ «Բազմապէս» այս տարվա պարիւր-մայիս-յունիսի պրակի մէջ սկսել են տառադարձութեան երկու ձևն էլ գործածել, որպէս զի երկու կողմերն էլ հանելի լի-նեն: Բայց ենք անուր այդ տեսակի առաջին երեսը, որտեղ «Յանկ նիւթոց» է տպված թէ հայերէն և թէ ֆրանսերէն լեզուով, և ինչ ենք տեսնում. մի տեղ «Սպարդ Կիկոն» թարգմանված է ֆրանսերէն «Le charretier Kiko» (ուրեմն այդտեղ սուրբ հայերը մեզ պէս են գործածում հայոց Կ. տա-ռը, նրա դիմաց ֆրանսիական K. տառը դնելով). յայտնի են նոյն երեսում մի քանի տող ներքեւ և յանկարծ տեսնում ենք՝ «Հաղոր Մէլիք Յակոբեան», և նրա դիմաց ֆրանսերէն՝ Hagob Melik-Hago-bian.... Այդտեղ նոյն հայոց Կ. տառը արդէն դարձել է, ոչ թէ վերելի պէս K. տառ, այլ ա-ռանց որ և է պատճառի, յանկարծ կերպարանա-փոխվել է, և դարձել է G. տառ: Վերջապէս մի և նոյն անուան մէջ՝ Edmond De Amicis, ֆրանսիական D. տառը սկզբից երկու անգամ գրվում է հայերէն Գ. տառով, իսկ երրորդ ան-գամ S. տառով.... Ահա ինչպէս. Էլմոնդ Տէ Ա-միչիս....

Խեղճերը բոլորովին մոլորվել են.... Եւ չը գի-տեն «Որ ջուրն ընկնեն»:

Եւ սրանք դեռ յանդիմում են հանդիմանալ իբրև մեր ուսումնական հայոց լեզու....

Գ. Ա.

Կուսակցութիւնները բաւական լաւ և խելօք կաշխատեն: Մեր առած վերջին տեղեկութիւնները հետեւեալ թիւերը կը հաղորդեն: Նոր-Պէյ խորէն սրբազան ունի ապահով 40 ձայն, Բարթողի մօտեայ եպիսկոպոս ապահով 35 ձայն, իսկ 40 ձայնի մօտ անորոշ: Այս անորոշ ձայնները մեծ մասամբ Ալեքեան խորէն եպիսկոպոսին, փոքր մասամբ Խոյսեան Մատթէոս եպիսկոպոսին են, իսկ այժմ կաշխատուի, որ Սիմոն եպիսկոպոսի դառնան. բոլոր խնդիրն ասոնց ձեռքն է: Նիթէ ասոնք ամբողջապէս, կամ մասամբ, կամ Բարթողի մէջով կամ խորէնի դառնան, նորա ընտրութիւնն ապահով է. իսկ ինքի ուրիշ անձի մը միանան, այն ատեն ոչ ոք կընտրուի առաջին քուէ-արկութեան, և երեք-չորս ընտրելիներէն երկուքը կը մնան համեմատականը և յաջորդ նստի մը կը կատարուի ընտրութիւնն այդ երկուքն միոյն վրայ. բայց որին այդ անհնարին է այժմէն հաշուել: Ուրեմն այս տեղ կը թողուին:

Տպագրական տեսչութեան հրամանաց վրայ հանդարտութիւն կը տրիք Պատիկ կոնսակի խնդրոյն առթիւ ծագած վէճերէ վերջ:

Պէշիկթաշի գերեզմանատան խնդիրը նորէն ծագեցաւ, բայց այս անգամ մասամբ Այդ գերեզմանատունէն քիչ մը տեղ—պարսպ հող—ուղղած է պալատէն ջուրի մէքենայնեղու համար: Կրօնական Ժողովը ըսած էր թէ գերեզմանն ամբողջապէս կայսեր տրուեցաւ, և չուզեց, ուստի մասամբ նուէրի տեղի չը կայ, կարելի է ամբողջապէս առնուլ. բայց Գաղ. Ժողովն այլ կերպ անգամ, տեղապահու ու Գաղ. Ժողովոյ զիւանդ համաձայնութեամբ որոշելին տալ ուղղած հողը և ըստ այնմ ալ հրահանգ տուին Պէշիկթաշի թաղ. խորհրդին:

Կայսեր գահակալութեան տարեդարձի առթիւ տեղապահար աղերսաղի տուաւ կայսեր հայ քաղաքական արտօրելոց և քաղաքական բանտարկելոց համար ազատութիւն խնդրելու. դեռ պատասխան չեկաւ:

Հայկակ

ՆԱՄԱԿ ԵՎ ԼԵՑՈՒՄՆԵՐ

Ժողովի 1-ին սեպտեմբերի

«Մշակի» № 93-ի մէջ դեմտեղեց մի թղթակցութիւն Ժողովից «Վարաջ» ստորագրութեամբ: Մենք ցաւում ենք, որ պարտաւորված ենք այդ թղթակցութեան վրա «Մշակի» ընթերցողներին ուղարկելու դարձնել, մի թղթակցութիւն, որը եթէ անխառնաբար խաղաղիք չը դարձնէր արտասահմանական ամբողջ հայ ուսանողութիւնը, մենք արհամարհական լուծիւն կը մատնէինք: Մենք մեր պարտքն ենք համարում այդպիսի թղթակցութիւններից զգուշացնել հայ հասարակութիւնը:

Պախարակել որ և է Ժողովից, կամ ընկերութեան, կամ չըջանի նողկալի պակասութիւնները, դատարկութիւնը նրանց անարժան բարձր ու սովորութիւնները, նրանց վատ արարքները, երևան հանել նրանց տեղեկութիւնները, երբ այդ բոլորը ներկայացնում է որ և է հասարակական իրաւորէն, երբ այդ բոլորը շօշափում է որ և է հասարակական երևոյթ կամ խնդիր, և այդ անել առաջնորդվելով բարի ձգտումներով—դա մէկ օգտաւէտ գործ է: Բայց այդպիսի դեռ բաւական չէ: Երբ որ մէկը, զորված բարի ձգտումներով, ուղղում է մերկացնել ու դատաւարտել որ և է հասարակութեան պակասութիւնները,—նրա առաջաւու պարտքն է լինել անաչառ, խղճմտաւոր ու ազնիւ: Այդ պակասութիւնների բացակայութիւնն իսկոյն և եթ կը մատնէ դատարկութիւնը յարձակումների իսկական նպատակը և կապացուցանէ, որ նա ոչ թէ բարի, այլ չարամիտ ձգտումներով է ղեկավարվել իր դատարկութեան թիւնների մէջ:

Այդ վերջին տեսակին է պատկանում և պարաջի նամակը:

«Փոյթ չէ մեզ (!)»,—ասում է կասկածելի սրբապետութեամբ նամակագիրը.—«թէ կը հանդիպենք ամեն տեսակ սպասելի նախադրութիւններ և անհամարութիւններ. մեզ միտքաբար կը զգանք նրանով, որ արդարութիւնն ենք (!)» երևան հանել և ուսանողական գործը պաշտպանել (!), ինչպէս մենք ենք հասկանում (?)»:

Անշուշտ պարտքն չէր կարող երևակայել, որ այնպիսի անհամ ու տեղեկ պապիկ լի և ի նստի ու ա յ ի ա ն ե ի, որպիսին իր թղթակցութիւնն է, անպատասխան մնայ արտասահմանական ամբողջ հայ ուսանողութեան կողմից: Այդ

է պատճառը, որ նա իրան միտքաբար է թէ «Փոյթ չէ» իրան և այլն: Եւ այնուհետեւ, բնականաբար, նա իրան «միտքաբար» է դրում նրանով, որ մի քանի հայ ուսանողների դէմ ամբողջով ու տարիններով կուտակված իր վրիժապահանջ մաղձը նա, վերջապէս, կարողանում է թափել իր նամակում:

Բայց միթէ անաչառ, խղճմտաւոր ու ազնիւ կարող ենք համարել նամակագիր կողմից, որ, մի քանի ուսանողների անհաշտ թշնամին լինելով, նա իրան իրաւունք է տալիս յարձակվել արտասահմանական ամբողջ հայ ուսանողութեան դէմ:

Մենք գիտենք, որ արտասահման հայ ուսանողութեան մէջ, որպէս և ամեն ազգի ուսանողութեան մէջ, կան այնպիսի անձեր, այնպիսի անբարոյական ու գաղջ տիպեր, որոնք ստորագնում են ամբողջ ուսանողութեան պատիւը, որոնց ստոր արարքներն արժանի են անելի մեծ պատժի, քան նոյն իսկ հրապարակական դատարկութեան: Բայց այդ անհրաժեշտը ոչ որքին իրաւունք չէ տալիս ընդհանրացնել իրողութիւնը և գրչի մի գծով, անխղճմտանք կերպով, մի քանի պառակտների կեղտը վերագրել ամենին:

Պ. Նամակագիր ասելով. արտասահմանական ամբողջ հայ ուսանողութիւնը ներկայանում է բարոյական ու մտաւոր պրոլետարիատ: Նրա անելով թիւրքահայ բոլոր ուսանողները և ուսանող հայ ուսանողներին մի մասը կարելիքներն են: Մնացած ուսանողներից՝ ոմանք թիւրք, սխալ հասկացողութիւնների տէր են, ոմանք անբարոյական, ոմանք ֆրագոր, իմաստ, համալսարանի օգուտը հերքող և այլն... Բայց մի հայց առաջարկենք ինքնահաւան պարտին.—միթէ նա այնպիսի միամիտ է կարծում իր ընթերցողներին, որ նրանք, պ. Վարաջի խօսքերի հիման վրա, արտասահմանի ամբողջ հայ ուսանողութիւնը համարեն այդքան ողորմելի:

Պ. Վարաջ բարեհաճում է ծանուցել, կրել և յայտնել հայ հասարակութեանը, թէ արտասահմանական ուսանողական շրջանների հասկացողութիւնները, գաղափարները, հայեացքները թիւրք, սխալ, անմիտ են: Այդ պարագայում պարտքն նոյնպէս ծանուցել է կրում չը ծանձրացնել ուսանողական շրջաններին, կանխապէս նրանց հասկացողութիւններին հետ ծանօթանալու համար: Զուր չարաբանք: Ինչո՞ւ այդ անել, քանի որ ինքը Վարաջն առանց որ և է դժուարութեան կարող է ուսանողական շրջաններին վերագրել թիւրք, տառա, ծիծաղելի հասկացողութիւններ և դարձեալ նոյն ինքը Վարաջ յարձակվել այդ հասկացողութիւնների դէմ: Այդպիսով ուրիշների փոխարէն պարտքն ձևում է, կտրում է և կարում է:

Այդ օրինակելի մեթոդով պ. Վարաջ յարձակվելով ուսանողութեան վրա թէ՛ այս մէկը «սիրան» է պաշտպանում, միւսը՝ «ձեռնադրութիւն», երբ որքը «տեղեկ» է և այլն, մի խօսքով, քար քարի վրա չը թողնելով իր բարձրութիւնից բէց է պտնել, իւրապէս է կարողում այդ ուսանողութեան պիտի: Սակայն ինչ մտածէ ընթերցողը նամակագրի այդպիսի արարքի մասին, երբ նա իմանայ, որ այդ պարտքն իր ոտքն այստեղ կոխելուն պէս, երկու տարի սրանից առաջ, հայ ուսանողների մի մասի հետ տեսնվել է ընդամենը մի քանի անգամ և յետոյ կուգիլ բաժանվել, իսկ միւս մասը նրա հետ ոչինչ յարաբերութիւններ չունէր և ինքը, նամակագիրը, համարվում է նրանց անհաշտ թշնամին: Ուրեմն ինչպէս կարող է պարտքը, լինելով հեռու ամենքից, գիտնալ թէ՛ ինչ են նրան ուսանողներն իրանց տան մէջ, կամ համալսարանում, կամ ընկերական շրջաններում և կամ ինչ գաղափարների տէր են նրանք, և հրապարակապէս նոյնն էլ ասել թէ՛ փարիզի, թէ՛ Մոնպելիէի և թէ՛ «ամեն տեղի» հայ ուսանողութեան մասին:

Կայ մի նշանաւոր կէտ այդ արդէն ամեն կողմից նշանաւոր նամակում: Մեր խօսքն այն կէտի մասին է, որ նա նուիրում է բուրժուազիային: Խոստովանում ենք, այդ կտորի ոչ նպատակը, ոչ միտքը, ոչ յարմարութիւնը, ոչ պիտանութիւնը այդ նամակում մենք չենք հասկանում: Մենք հակադէմ ենք ենթադրել, որ Վարաջն ուրիշներին անուանելով «ֆրագոր», ուղեցել է իր անձի վրա ցոյց տալ այդպիսի տիպի որպիսութիւնը: Մենք ոչինչ որոշ զգալիաւ, ոչինչ որոշ համոզում այդ կտորի մէջ չենք տեսնում, բացի մեծ մեծ խօսքերի հաւաքածուից... Սակայն ինչ փաստերի վրա է հիմնում պ.

Վարաջն իր յարձակումներն ուսանողութեան դէմ: Նրա նամակի մինչ այդ կէտը դեռ մենք ոչինչ չը տեսնենք: Բայց ահա իր նամակի վերջին մասն ինչ որ փաստեր է առաջ բերում: Նայենք մի րօպէ: Նրա ներկայացրած փաստերը շատ չինքն են երևում և նկատվում է, որ չուն ուղտ է շինել: Բացի դրանից, պէտք է ենթադրել, որ նրանք տեղի են ունեցել շատ ժամանակ առաջ, քանի որ մեզ յայտնի է, որ գրելիք տարի ու կէս կայ, որ պ. Վարաջ հեռու է մնում մեր շրջանից: Ահա մի փաստ: Նամակագիրը յայտնում է մէկ ինչ որ իրողութիւն, թէ մէկ ուսանող միւսին վռնդել է իր սենեակից: Շատ սիրուն: Բայց եթէ այդ բանը կատարվել է ազնիւ զգացման շնորհով և ոչ չինքն բանի համար, ինչպէս ուղում է հաւատացնել Վարաջը,—արդեօք անխտիր կերպով պատարակենք այդպէս վարվելին: Մէկ ուրիշ փաստ: Ուսանողներից մէկը մի քանի տարվայ ընթացքում Եւրօպայում մի քանի անգամ քաղաքներ է փոփոխել: Բայց միթէ դա դարմանալի է: Նա գիտէ և այն քաղաքը, որտեղ իր ձեռնունքներն և ընդունակութիւններն համեմատ առարկայով պարագայում է մի յայտնի ժամանակի Վա շատ սովորական երևոյթ է եւրօպական ամեն ազգերի ուսանողութիւնների մէջ, մասնաւոր աչքի առջև ունենալով այն, որ հըմուտ պրօֆեսորների դասախօսութիւնների համար են զլխաւորապէս անվում այդպիսի քայլեր, իսկ յայտնի է, որ զանազան առարկաների հմուտ դասախօսները ժողովված չեն մի և նոյն քաղաքում: Գարձեալ ոչինչ զարմանալի ու զատարկութիւն» բան չենք տեսնում դրա մէջ: Այդպիսի փաստերը միթէ ստորագնում են ուսանողութիւնը, միթէ արատաւորում, ստուեր են դրում նրա բարոյականի վրա... Եթէ մէկ աչքի ընկնող փաստ է ներկայացնում Վարաջ, այդ այն է թէ մի ինչ որ ուսանող զրպարտիչ, ստոր, կեղծաւոր նամակներ է գրել այս կամ այն ուսանողի մասին նրա ծնողներին. խոստովանվում ենք, որ այստեստե մինչև անգամ դա մեղ էլ այնչափ չէ զարմանում ու դարմանում, քանի որ պ. Վարաջն ինքը իւրաքանչիւր հայ ուսանողի դէմ առանձին առանձին և միասին առված ամբողջ հայ ուսանողութեան դէմ անում է նոյնը և ասելի ապշեցնող, ասելի յանդուգն, ասելի զայրացնող կերպով, այն է—հրապարակապէս:

Այնուհետեւ պարտքն ներկայացնում է ուրիշ կէտեր, որոնց նմանապէս «իրողութիւններ» է անուանում: Նա ասում է թէ՛ ուսանողներից մէկը կեղծաւորութեան տիպար է, միւսը ոչնչար է, երբ որքը ճշտող է և այլն: Բայց դրանք մեղք խօսք են, որ կարօտ են հաստատութեան: Այդպիսով ամեն մի մարդ, զորված թշնամական զգացումներով՝ կարող է ամենայն զրպարտութիւններով ուրիշի աչքին ստորացնել ամենաազնիւ մարդուն: Հայոց հրապարակախօսական ասպարէզը իսկ ապշեցնող յանդուգնութեամբ դնում է մեր առջև այդպիսի օրինակներ:

Իր նամակի վերջերը պ. Վարաջ խոստովանվում է, որ իրան «հասած տեղ և կուտիւն» է ի ման ոււււ, որ ամեն տեղ հայ ուսանողութեան մէջ տեղի են ունեցել բաւական քանակ, զրպարտութիւններ, ընկերական ընդհարումներ: Կատարեալ բացակայութիւն, խորին կեղծաւորութիւն... Մենք նամակագրին խորհուրդ կը տայինք լինել ասելի լուրջ, ասելի հասկացող, ասելի ազնիւ ու անաչառ իրան «հասած տեղեկութիւններ» վրա,—որքան միշտ կարող են թիւրք ու անճշտ լինել: Մենք նրան խորհուրդ է կը տայինք, քանի որ ինքն իրան «սկզպակի» է անուանում, հաւատարիմ մնալ իր «սկզպակի» բնաւորութեան սկզբունքին և նախ քան միտքել մէկին, իրան «հասած տեղեկութիւններն» ասելի ստուգել և խիստ կերպով ստուգել և այնուհետեւ միայն անել իր քայլը:

Ունենալով աչքի ընկնող, խոշոր պակասութիւններ, որոնք դատաւարտելի են, բայց որոնք զլխաւորապէս պատկանում են անուանձին անձնաւորութիւններին և ընդհանրացնելու իրաւունք մենք չունենք բնական, արտասահմանական հայ ուսանողութիւնը միշտ ցոյց է տուել և մտաւոր պաշար, և ազնիւ ու բարձր ձգտումներ, զգացումներ ու գործողութիւններ, որոնք, զբաղղաբար, խոստովել են Վարաջի աչքից և կամ նա անընդունակ է եղել նկատելու: Այսպէս, ոչ իւր բացառութիւն, այլ իւրեւ ընկերական սովորութիւնն ու պարտք, այն ուսանողութիւնը, որին պախարակում է նամակագիրը, իր բոլոր ոյժերով տարիներ ընթացքում նրթապէս պահպանել է

չբաւոր ուսանողներին, մի փաստ որ շատ լաւ յայտնի է պ. Վարաջին:

Հայ հասարակական խնդիրների, երկողքների վերաբերութեամբ արտասահմանական հայ ուսանողութիւնը միշտ արել է այնքան, որքան նրա հանգամանքները և ոյժերը ներել են:

Եթէ մեր նամակն այսչափ չերկարեր, մենք առաջ կը բերէինք և ուրիշ իրողութիւններ ուսանողական կեանքից, որոնք ապացոյց կը լինէին, թէ նա այնչափ էլ տհաս ու անբարոյական չէ, որչափ պ. Վարաջին սիրելի է նկարագրել:

Թէ արդեօք հայ ուսանողութիւնը որչափ և որպիսի մտաւոր պաշարով կը սկսէ իր կեանքն իր հայրենիքում, մենք չենք ուղում մարգարէական. դա ապագայի խնդիր է:

Մի խումբ ուսանողներ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից հեռագրում են, որ բոլգարական արտաքին գործերի մինիստր Նաչկովի անձի դէմ փորձ եղաւ: Գրաւ պատճառը, ինչպէս կարծում են, քաղաքական է:

—Բերլինի քաղաքական շրջաններում, ինչպէս գրում են այնտեղից, վերջին ժամանակներս առանձին հետաքրքրութիւն է նկատվում դէպի բոլգարական խնդիրը, և գերմանական կառավարութիւնը ձգտում է այսպէս թէ այնպէս մի որոշ դիրք տալ Բոլգարիայի գործերին:

—Բելգրադում լուրեր են պտտում, որ թագաւորական զոյգի մէջ համաձայնութիւն կը կայանայ:

—Ֆրանց-Յոսեփի կայսրը սրանից մի քանի ժամանակ առաջ յանդիմանեց եպիսկոպոս Ծարօսմայրին այն համակրական հեռագրի համար, որ նա ուղարկել էր Կիէլի Ռուսաստանի մկրտութեան 900-ամեակի առիթով: Այդ յանդիմանութեան դէպքը մինչև այժմ էլ թէ աղմուկ և թէ ուրախութիւն է առաջ բերում աւստրիական պետութեան զանազան ազգութիւնների մէջ: Ունգարացիների ուրախութեան վերջ չը կայ, և զոյգ մամուլը այդ դէպքին քաղաքական անազնի նշանակութիւն է տալիս:

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօ ներկայումս ճանապարհորդում է Ֆրանսիայի հիւսիսային կողմերում և ամեն կողմ հանդիպում է համակրութեան և սիրալիք ընդունելութեան: Միապետականները վրդովված սրտով են նայում հանրապետութեան ներկայացուցչին ցոյց տուած այդ համակրութեան վրա:

—Վերլինի ժամանակներս, կրկին լուրեր են պտտում իշխան Քլաւսի հրաժարականի մասին: Բայց թէ ինչ բան կարող է լինել այդ հրաժարականի պատճառը, այն էլ Վիէննայի կայսրութեան օրով,—այդ յայտնի չէ:

—Հռօմի պապի հրատարակած կոնդալը և Կ. Պոլսի ազգային վարչութեան տուած պատասխանը ուղարկութեան է արժանացել և եւրօպական մամուլի կողմից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱԶԱՆ, 12 սեպտեմբերի: Յիվիլի գաւառի 46 զիւղացիները գործի համար,—որոնք դատի են ենթարկված Կազանի զինուորական-նահանգական դատարանում՝ ոտորկանութեանը զինազրկու համար, որի ժամանակ սպանված են երեք վիսներ.—վիճու է կայացրած, որի դօրութեամբ 17 հոգի դատաւարտված են կախաղանի, իսկ մնացածները արդարացրած են: Ընդդիմադրութեան առթիւ եղել է հողային վէճը՝ երկու հարկան զիւղական հասարակութիւնների մէջ:

ԽԱՐԱՅԻ, 12 սեպտեմբերի: Այսօր բացվեց Գօնեցի շրջանի անխաղաղութեան ժողովը արտակարգ նիստը, որի նպատակն է պարզել անուխի ձգնաժամի պատճառները և միջոցներ որոնել զորա առաջն առնելու համար: Ժողովը կը տնի երեք օր: Ժողովին ներկայ լինելու համար եկել են մինչև 40 մարդ:

ՄԱԳԻՐԻ, 12 սեպտեմբերի: Երէկ վախճանվեց նախկին մարշալ Բազէն:

ՊԵՏՐՈՒՊՈԼԻ, 13 սեպտեմբերի: Հրատարակված է Ուրալ—Վոլգայի երկաթուղու ընկերութեան կանոնադրութիւնը: Ուրալակից մինչև Օրենբուրգեան ճանապարհի Պոմլեով կայարանը այդ երկաթուղու շինելը և նրա բանեցնելը յանձն

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 432.